Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.605

333.301
4-12

15 JAN 2010

№ 10 Գրադարան «Յառաջ»-ի № 10

71

Ս. ԿԱՐԱՆՈՎ.

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ

ՆՈՐ

ԶԵԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Թարգմ. օր. Հ. Տ.

Գ-րդ հրատ.

2 Կոպ.

1906
ԹԻՖԼԻՍ

№ 10 Գրադարան «Յառաջ»-ի № 10

333.301
4-12

Ե. ԿԱԲԱՆՈՎ

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ

ՆՈՐ

ՋԵԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Թարգմ. օր. Հ. Տ.

1906
ԹԻՖԼԻՍ

16 MAY 2013

25.605

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Էլէքտրաշարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ. Մաղաթեան փող. № 5.

1906 (186)

ԹԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUOR-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

21917-59

A. Bodikian

Մեզանից հեռու մի երկրում, որ կոչւում է Նոր Զելանդիա, սրանից 100 տարի առաջ ապրում էին համարեա բացառապէս վայրենի մարդակերներ։ Իսկ այժմ Նոր Զելանդիան ամենահարուստ երկիրներից մէկն է՝ իր լուսաւորւած ժողովրդով, իր օրինակելի պետական և հասարակական կազմակերպութեամբ։ Իսկ ինչպէս կատարւեց այդ հրաշքը։

Նոր-Զելանդիան բաղկացած է մի քանի կղզիներից, որոնցից երկուսը շատ մեծ են։ Երկրի ամբողջ մակերևոյթը հաւասար է մօտաւորապէս մեր միջակ մեծութիւն ունեցող չորս նահանգներին։

Առաջին անգամ 250 տարի սրանից առաջ այս երկիրը յայտնի դարձաւ եւրոպացիներին. բայց միայն 80 տարի է, ինչ եւրոպացիները ըսկըսեցին գալ ու բնակւել այդ երկրում։ Դրանք գլխաւորապէս անգլիացիներ էին և յատկապէս միսիոնէրներ, այսինքն այնպիսի հոգևորականներ, որոնք գնում էին Նոր Զելանդիա՝ այնտեղի վայրենի ցեղերին քրիստոնէութիւն քարոզելու համար։ Յետոյ սկսեցին այնտեղ երթալ նաև վաճառականներ իրանց նաւերով՝ տեղացի վայրենիների հետ առևտուր անելու համար։ Այդ վաճառականներից մի քանիսը հէնց այդ նպատակով այնտեղ բնակութիւն հաստատեցին։ Նոր Զելանդիայում ապրող եւրոպացիների թիւը ըսկըսեց հետզհետէ աճել։ Գաղթած եւրոպացիներից մի քանիսը սկսեցին տեղացիներից հողեր

գնել, համարեա գրոշներով ձեռք էին բերում հազարաւոր դեսեատիններ. հողի քանակութիւնը մեծ էր, իսկ տեղացիների թիւը համեմատաբար սակաւ։ Բացի դրանից տեղացի վայրենիները քիչ էին հասկանում փողի և բերովի ապրանքների արժէքը, որոնց փոխարէն նրանք տալիս էին հող։ Դրա հետ միասին եւրոպացի գնողները անխղճաբար խաբում էին տեղացիներին և, հող գնելով, իրենց քմահաճոյքով էին չափում այդ հողը, առանց հողաչափների։ Ահա այս կերպ մի քանի տարուայ ընթացքում «գնուեց» Նոր Զելանդիայի աւելի քան 1/3 մասը։ Այդ գնումների նպատակն էր, ի հարկէ, հեշտ ճանապարհով հարստութիւն դիզել. գնում էին հողը գրոշներով, որպէսզի յետոյ, երբ հարիւր հազարաւոր գաղթականներ Եւրոպայից կթափուեն Նոր Զելանդիա, շատ թանգ գնով ծախեն այն։

Այսպիսի շահադիտական նպատակներով էլ 1837 թուականին հիմնուեց Անգլիայում անգլիական կապիտալիստների մի մեծ ընկերութիւն, որի հիմնական դրամագլուխն էր մէկ միլիոն ր.։ Առաջ «առանձին-առանձին» էին ուզում հարստանալ, իսկ այժմ՝ խմբովին։ Այդ ընկերութիւնը երեք ամսուայ ընթացքում գնեց աւելի քան եօթը միլիոն դեսեատին հող. ինչ խօսք, այդ ընկերութիւնն էլ հողը գնում էր էժան, անխնայ կերպով խաբելով տեղացիներին։ Միջին հաշուով հողը ընկերութեանը նստում էր մէկ ռուբլուց մի փոքր աւելի։

Հողը գնելուց յետոյ ընկերութիւնը սկսեց մարդիկ որոնել, որոնք կուզէին Նոր Զելանդիա գաղթել և նրանցից առանձին հողաբաժիններ գընել։ Անգլիայի գաղթականների առաջին խումբը

Նոր-Զելանդիա եկաւ 1840 թուի յունուարին։ Անգլիական կառավարութիւնը վճռեց օգտուել Անգլիացիների՝ Նոր-Զելանդիայում բնակութիւն հաստատելուց և նոյն տարում յայտարարուեց, որ Նոր-Զելանդիան միացուում է իր գաղթավայրերին։ Սակայն անգլիական կառավարութիւնը չըվրստահացաւ այս երկիրը միացնել առանց տեղական ցեղերի համաձայնութեան։ Նա բանակցութեան մէջ մտաւ Նոր-Զելանդիայի բնակիչների ցեղապետների հետ։ Երկար բանակցութիւններից յետոյ անգլիական կառավարութիւնը նրանց հետ մի դաշինք կռեց, որով Անգլիայի թագուհին ճանաչուում էր միաժամանակ Նոր-Զելանդիայի թագուհի։ Նոր-Զելանդիայի բովանդակ հողերը ճանաչուեցին իբրև այնտեղի ցեղերի ու նրանց ցեղապետների սեփականութիւն. սակայն անգլիական կառավարութեանը վերապահուում էր մի արտօնեալ իրաւունք տեղացիներից հող ձեռք բերելու համար։

Վերջապէս անգլիական կառավարութիւնը տեղացիներին տուեց այն բոլոր քաղաքացիական իրաւունքները, որ վայելում էին անգլիացիները, այսինքն խղճի, անձի, խօսքի, մամուլի, ժողովումների և միութիւնների ազատութիւն։ Այդ դաշինքը իսկապէս ձեռնտու էր տեղացիներին, որովհետև հողերի արդէն կատարուած գնումները դրանով ճանաչուեցին անվաւեր, իսկ այնուհետև չէր կարելի առանց կառավարութեան գիտութեան ու համաձայնութեան հող գնել։ Այսպէս վերջացաւ, ի պատիւ անգլիական կառավարութեան, Նոր-Զելանդիայի հողերի խաբեբայական գնումը, այնտեղ ներս խուժած գիշատիչների կողմից։

Նոր-Զելանդիայում եւրոպական գաղութներ հիմնելու նպատակով անգլիական կառավարութիւնը ինքը սկսեց տեղացիներից հողեր գնել, որպէսզի ապագայում այդ հողերը ծախի գաղթականներին։ Անգլիական կապիտալիստների միութեան ձեռքով սկզբում գնած հողերը նոյնպէս ճանաչուեցին անվաւեր։ 7 միլլիոն դեսեատին հողի փոխարէն միութեան տրամադրութեան տակ թողեցին ընդամենը 90 հազար դեսեատին, այսինքն 75 անգամ գնածից պակաս։ Վերաքննուեց նախ եւրոպացիների իրաւունքները արդէն գնած հողերի վերաբերմամբ և ամենուրեք վերականգնեցին տեղացիների իրաւունքները։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ այդ օրից սկսած եւրոպացիները աւելի արագ սկսեցին գաղթել Նոր-Զելանդիա։

Երկրագործութիւնը սկսեց զարգանալ, իսկ մանաւորապէս խաշնարածութիւնը, այսինքն ոչխարաբուծութիւնը, որը աւելի ձեռնտու երևաց։ Նախ, որ խաշնարածութիւնը չէր պահանջում հողի մշակումը, չէր պահանջում մեծաքանակ բանուորներ (որոնց թիւը այն ժամանակ շատ սակաւ էր) և միւս կողմից բուրդը կարելի էր շատ հեշտ կերպով և լաւ գնով ծախել Անգլիայում, որտեղ, ինչպէս յայտնի է, շատ զարգացած է ոստայնագործութիւնը։

Երկրագործութեան և մանաւանդ խաշնարածութեան զարգացման հետ միասին Նոր-Զելանդիան սկսեց հարստանալ, նրա ազգաբնակչութիւնն էլ զգալապէս աճում էր։ Միևնոյն ժամանակ առաջ եկան և ընդարձակ կալուածներ, որոնց տարածութիւնը հասնում էր տասնեակ հազարաւոր դեսեատիններին։ Այդպիսի մեծ կալուածները սովորաբար ծառայում էին ոչխարների համար որպէս արօտավայրեր։

Այդ միջոցին Նոր-Զելանդիան, Անգլիայի հետ միանալու օրից սկսած, կառավարւում էր այնտեղ ուղարկուող անգլիական չինովնիկներով, որոնց գլուխ կանգնած էին լինում նահանգապետներ։ Իսկ երկրի բնակիչները, չնայած որ վայելում էին բոլոր ազատութիւնները, սակայն չունէին քաղաքական իրաւունքներ, այսինքն նրանք ոչ մի մասնակցութիւն չունէին իրենց երկիրը կառավարելու գործում։ Բնական է, որ Անգլիայի գաղթականները, Նոր-Զելանդիան Անգլիայի հետ միանալուց, յետոյ շուտով սկսեցին աշխատել ձեռք բերել ինքնավարութիւն, այսինքն այն քաղաքական իրաւունքները, ինչ որ նրանք վայելում էին առաջ իրանց հայրենիքում։ Եւ որովհետև անգլիական կառավարութիւնը նախընթաց տարիների դառն փորձով սովոր էր զլջել ժողովրդին, երբ սա ինքը մի բան յամառութեամբ պահանջում էր, այդ պատճառով էլ նա բաւարարութիւն տուեց նրանց պահանջին և 1883 թուականին մտցրեց տեղային ինքնավարութիւն, այսինքն՝ Նոր-Զելանդիան սկսեց կառավարուել ժողովրդական ներկայացուցիչների ժողովով, իսկ նահանգապետի իշխանութիւնը սկսեց արագօրէն ընկնել։

Պէտք է նկատել, որ տեղական ինքնավարութեան ներմուծմամբ քաղաքական իրաւունքներ ստացան ոչ միայն անգլիացի գաղթականները, այլ և նոյն չափով՝ տեղացիները։ Կրթութիւնը արագօրէն զարգացաւ տեղացիների մէջ. կարճ ժամանակամիջոցում զգալի կերպով բարձրացուեց նրանց կենցաղը։ Ինչ ասել կուզի, որ այժ-

մեան տեղացիները ոչ մի նմանութիւն չունեն իրանց՝ ժամանակով ոչ այնքան հեռու՝ մարդակեր նախահայրերի հետ։ Անգլիական կառավարութիւնը չվախեցաւ վայրենիներին անգամ քաղաքական իրաւունքներ տալ. և իսկապէս, նրա արած այդ քայլը ոչ թէ վնասակար դուրս եկաւ, այլ ընդհակառակը նպաստեց երկրի արագ և բազմակողմանի զարգացմանը։

Ներկայումս Նոր-Զելանդիան կառավարւում է ժողովրդական ներկայացուցիչների պալատով, որը ընտրւում է ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղղակի ընտրութեամբ՝ առանց կրօնի, ազգի-և սեռի խտրութեան։

Այսպիսով 1833 թուականից սկսած Նոր-Զելանդիան սկսեց կառավարել ինքը ժողովուրդը։ Դրա համար ամենևին զօրքի կարիք չզգացուեց, որովհետև երկիրը բաղկացած է կղզիներից և ժողովուրդը ոչ ոքի հետ պատերազմելու էլ կարիք չունէր։ Չի կարող ի հարկէ նաև պատահել, որ ժողովրդական կառավարութիւնը կռուի ելնէ ժողովրդի դէմ, հետևապէս այնտեղ չեն կարող լինել նաև «ներքին թշնամիներ»։ Նոյնպէս չինովնիկներ ունենալու մեծ կարիք չզգացուեց, որովհետև պաշտօնեաների մեծամասնութիւնը ընտրովի է և ոչ թէ նշանակովի, այսինքն համարեա բոլոր գործերը վարում են ոչ թէ չինովնիկները, այլ ինքը ժողովուրդը իւր ընտրեալների միջոցով։ Իսկ ինչ վերաբերում է ոստիկանութեան, նա ամբողջապէս ենթարկուած է քաղաքային խորհուրդներին ու զեմստվոներին։ Ոստիկաններին նշանակում և պաշտօնազուրկ են անում քաղաքային և զեմստվոյական վարչութիւնները. հետևապէս այդ ոստիկանները ոչ մի

պարագայում չեն կարող ժողովրդի կամքին հակառակ երթալ։ Այն էլ կայ, որ այդ երկրում, ի հարկէ, ոստիկանների շատ աւելի քիչ պահանջ կայ, քան մեզանում։

Ահա թէ ինչ պայմաններում կատարուեցաւ այն ամենամեծ հրաշքը, որ մի քանի տասնեակ տարիների ընթացքում ստեղծեց մի ըստ ամենայնի օրինակելի պետութիւն։ Եւ այդ պետութիւնը ստեղծուեց ոչ թէ չինովնիկների ձեռքով, այլ ազատ և իրաւատէր քաղաքացիների ջանքով։ Գլուխ եկաւ այն, ինչ որ չէ յաջողուել երբէք և ոչ մի երկրում ոչ չինովնիկներին և ոչ իշխանաւորներին—նոյնիսկ դարերի ընթացքում։

Այն օրից սկսած, երբ կառավարութեան ղեկը անցաւ ժողովրդի ձեռքը, ժողովրդական կառավարութիւնն էլ սկսեց աւելի ու աւելի ուշադրութիւն դարձնել հողային հարցի վրայ։

Առաջին բանը, որի վրայ կառավարութիւնը կենդրոնացրեց իւր ուշադրութիւնը, դա առաջները գոյացած ընդարձակածաւալ կալուածքներն էին։ Ապագայի համար այդ բանը սպառնում էր, որ ամբողջ երկրի մեծագոյն մասը կանցնի մի քանի հարուստ մարդկանց ձեռքը։ Աչքի առաջ ունենալով այդ բանը՝ կառավարութիւնը վճռեց այսպէս թէ այնպէս այլ ևս թոյլ չտալ ընդարձակ հողերի գնումն։ Դրա համար սկզբում մտցրին առանձին հողային հարկ. մանր հողատէրերը ոչինչ չեն վճարում, իսկ խոշոր սեփականատէրերը վճարում են. որքան աւելի հող ունեն, այնքան էլ իւրաքանչիւր դեսեատինի համար աւելի հարկ են վճարում։ Այսպիսի պայմաններում ուղղակի ձեռնտու չէ շատ մեծ կալուածքներ ունենալը։ 1900 թուականին Նոր-Զելանդիայի բոլոր

սեփականատէրերի թիւն էր 103,000, որոնցից 13,000-ը հողային հարկ վճարող խոշոր սեփականատէրեր էին, իսկ 90,000-ը մանր և միջակ սեփականատէրեր, որոնք հողային հարկ չէին վճարում։

Այդ օրէնքի շնորհիւ մի քանի կալուածատէրեր ստիպուած էին ծախել իրենց կալուածքները։ Օրինակ՝ մի կալուածատէր ունէր 20,000 դեսեատին հող. ամբողջ հողը ծառայում էր որպէս արօտատեղիներ ոչխարների համար. նա ունէր ընդամենը 20 բանուոր-հովիւներ, և միայն ոչխար խուզելու կարճ ժամանակամիջոցում օրավարձով աշխատում էին նրա մօտ աւելի մեծ թուով բանուորներ։ Մնացած ժամանակամիջոցում, կարելի է ասել, այդ հողից օգտւում էին ոչ թէ մարդիկ, այլ միայն ոչխարներ և կալուածատէրը ինքը։ Երբ հողային հարկ մտցրին, կալուածատէրը հարկադրուած եղաւ շատ մեծ հարկեր վճարել։ Այլ ևս օգտաւէտ չէր ոչխարաբուծութեամբ պարապել. այդ պատճառով նա վճռեց ծախել իր կալուածքը։

Կառավարութիւնը գնելով այդ հողը, բաժանեց մասերի և առանձին-առանձին հողաբաժիններով ծախեց մանր սեփականատէրերի։ Ներկայումս այդ նախկին մեծ կալուածքի վրայ ապրում են աւելի քան 300 ընտանիք, որոնք պարապում են երկրագործութեամբ, այդ հողի արդիւնքն էլ քառապատիկ աւելացել է։

Կառավարութիւնը տարէցտարի աւելի խոշոր գումարներ է յատկացնում մեծ կալուածքներ գնելու համար, որպէսզի յետոյ այդ մեծ կալուածքները մանր մասերի բաժանի։ Ներկայումս կառավարութիւնը հողեր գնելու համար յատկացնում է մօտ 5 միլիոն ռուբլի։

Սակայն որովհետև ոչ բոլոր խոշոր կալուածատէրերը կամենում էին ծախել իրենց կալուածքները, այդ պատճառով էլ կառավարութիւնը, կամ այլապէս ժողովուրդը ինքը իւր ներկայացուցիչների միջոցով, մտցրեց հողի պարտադիր գնում. այսինքն՝ եթէ մի խոշոր կալուածատէր չկամենայ իւր յօժար կամքով ծախել հողը, կառավարութիւնը կստիպէ նրան ծախել այն, և այդ դէպքում կալուածքի գինը որոշում են յատուկ դրա համար ընտրուած դատաւորները։ Հողի պարտադիր գնման օրէնքներ մտցրին 1894 և 1896 թուականներին։ 4—5 տարուայ ընթացքում, այդ օրէնքը հրատարակելուց յետոյ, կառավարութիւնը պարտադիր գնման միջոցով ձեռք բերեց 77 կալուածք (125,000 դեսեատին), ծախսելով դրա վրայ 16 միլիոն ռուբլուց աւելի։ Պարզ է, ի հարկէ, որ ուր կառավարութիւնը ժողովրդական է, նա փող էլ չի խնայի իւր ժողովրդի բարօրութեան համար։

Սակայն այս միջոցներն էլ բաւարար չհամարուեցին։ Այդ պատճառով էլ կառավարութիւնը վճռեց սահմանափակել խոշոր կալուածքների գնումը մասնաւոր մարդկանց ձեռքով։ Այդ կարելի էր հեշտութեամբ իրագործել, մանաւանդ այն պատճառով, որ դեռ նախկին օրէնքների հիման վրայ էլ հողի վաճառումը չէր կարող տեղի ունենալ առանց կառավարութեան գիտութեան ու համաձայնութեան (առաջ անգլիական, իսկ այժմ իր սեփական ժողովրդական կառավարութեան համաձայնութեան)։ Այդ նպատակով մի օրէնք հրատարակուեց, որով ոչ ոք իրաւունք չունէր 240 դեսեատինից աւելի հող գնել առաջին որակի, և 750 դեսեատին երկրորդ, աւելի վատ, որակի։ Եւ եթէ գնողը արդէն հողատէր է և եթէ նա աւելի պակաս հող ունի քան 240 դեսեատին առաջին, և 750

դեսեատին երկրորդ որակի, այդ դէպքում նա կարող է գնել միայն պակասորդ մասը. այնպէս որ այդ գնումից յետոյ նա պիտի ունենայ ոչ աւելի քան 240 դեսեատին առաջին որակի և 750 դեսեատին երկրորդ որակի հող։ Իսկ եթէ մէկը աւելի հող ունի քան 240 դեսեատին առաջին որակի և 750 դեսեատին երկրորդ որակի, այդ դէպքում արդէն նա այլ ևս իրաւունք չունի և ոչ մի դեսեատին հող գնելու։ Պարզ է ուրեմն, որ այդ օրէնքով վերջ տրուեց խոշոր հողատիրութեանը։ Այս օրէնքի հրատարակումով անխուսափելիօրէն պէտք է ընկնէր խոշոր հողատիրութիւնը և կարճ ժամանակամիջոցում բոլորովին անյայտանար։

Սրա հետ միասին պէտք է նկատել, որ Նոր-Զելանդիայում դեռ բաւականաչափ հող կայ, որ բաւարարութիւն է տալիս իւրաքանչիւր ցանկացողի և հողի խիստ պահանջ դեռ չկայ։ Կասկած չկայ նաև, որ յետագայում կառավարութիւնը աւելի ու աւելի կպակասացնէ դեսեատինների այն քանակը, որ ունենալ կարելի է։ Վերջ ի վերջոյ, գուցէ և մօտ ապագայում, Նոր-Զելանդիայի ժողովուրդը անխուսափելիօրէն կհասնի այն բանին, որ իրաքանչիւր ոք կունենայ հէնց այնչափ հող, որչափ նա ինքը իր սեփական աշխատանքով մշակել կարող է՝ առանց վարձու աշխատաւորների օգնութեան։

Մանր հողատիրութիւնը զարգացնելու նպատակով կառավարութիւնը իր գնած հողերը ձրգտում է բաժանել աւելի մանր մասերի, իսկ վերջին ժամանակներս յաճախ 40 դեսեատին և աւելի փոքր տարածութեամբ հողաբաժինների, որպէզի հող կարողանան գնել ոչ միայն հարուստները, այլ և պակաս ունևորները. կառավարութիւնը ոչ միայն յետաձգում է հողագնի

վճարումը, այլ և տալիս է ձեռնտու փոխատուութիւն (4%) անասուններ, երկրագործական մեքենաներ առնելու և շինութիւններ կառուցելու համար։ Այդպիսով աւելի պակաս ունևորներին հնարաւորութիւն է տրւում ոչ միայն հող առնելու, այլ և իր տնտեսութիւնը կարգաւորելու և վաշխառուների ճանկը չընկնելու։

Նոյն նպատակով էլ, ով չի ցանկանում կառավարութիւնից հող գնել, նա կարող է նրանից կապալով հող վերցնել որոշ ժամանակամիջոցով, ըստ որում կապալառուն վերջը, եթէ կամենայ, կարող է կառավարութիւնից կապալով վերցրած հողը գնել։ Կապալառուներին ևս առավարութիւնը տալիս է ձեռնտու փոխառութիւն իր տնտեսութիւնը վարելու համար։ Ինչ ասել կուզի, որ կապալավճարը շատ փոքր է և բոլորովին չի համապատասխանում այն վճարին, որ սովորաբար նշանակում են վաշխառուները ու կալուածատէրերը։

Հասկանալի է ուրեմն, որ այդպիսի պայմաններում աւելի շատ ցանկացողներ են լինում հողը կապալով վերցնելու, քան թէ այն գնելու։ Այսպէս 1899 թուականին կառավարութիւնը կապալով տուեց 85,000 դեսեատին հող, իսկ ծախեց մօտ 6,000 դեսեատին։

Նոր-Զելանդիայի կառավարութիւնը լինելով այսպէս իսկական ժողովրդական, յիրաւի հոգս է քաշում, որ հողը ժողովրդի ձեռքում լինի, և ոչ թէ առանձին հարուստների ձեռքում։ Եւ դուրս է գալիս, որ ժողովրդի մասին ամենից լաւ կարող է հոգալ ինքը ժողովուրդը, իր ընտրած ժողովրդական ներկայացուցիչների միջոցով և ոչ թէ թագաւորները ու նրանց չինովնիկները։ Ահա թէ ինչու պետական պալատի ներկայացուցիչները պիտի անպատճառ ընտրուին ամբողջ ժողովրդի, ամբողջ չափահաս ազգաբնակութեան կողմից։

Այս բոլորի հետ միասին Նոր-Զելանդիայում աւելի ու աւելի տարածւում է այն կարծիքը, թէ

հողը չի կարող լինել մասնաւոր սեփականութիւն, նոյն իսկ մանը հողատէրերի համար, (գիւղացիների), այլ պէտք է դառնայ ամբողջ ժողովրդի, հասարակութեան սեփականութիւն։

Այս հայեացքը իրականացնելու համար, յիրաւի հողի մասնաւոր սեփականութիւնը ոչնչացնելու համար, Նոր-Զելանդիայի կառավարութիւնը վերջին ժամանակներում սկսել է իր ունեցած ու գնած հողերը կապալով տալ ոչ թէ այս կամ այն ժամանակամիջոցով, այլ այսպէս կոչուած յարատև կապալով (կամ, ինչպէս այնտեղ են ասում, 999 տարով)։

1899 թուականին կառավարութեան կողմից կապալով տուած 80,000 դեսեատին հողից համարեա թէ կէսը տրուել է յարատև կապալով։ Այդպիսի պայմաններում հողի սեփականատէրը մընում է ժողովուրդը, կամ, ուրիշ խօսքով, կազմակերպուած պետութիւնը, իսկ հողատէրը հանդիսանում է իբրև սոսկ կապալառու՝ ու այսպէս՝ յարատև կապալով տուած հողը ոչ մի պարագայում չի կարող գնուիլ և երբէք չի կարող դառնալ մասնաւոր սեփականութիւն։ Մտաբերենք մենք, որ Նոր-Զելանդիայում գոյութիւն ունի հողի պարտադիր գնման մասին մի օրէնք, ուրեմն և կառավարութիւնը, եթէ կամենայ, աստիճանաբար կարող է գնել բոլոր մասնաւոր մարդկանց պատկանող հողերը, դարձնել հասարակական սեփականութիւն։

Վերջապէս Նոր-Զելանդիայում (նոյնպէս և Աւստրալիայում) սկսում է տարածուել այն միտքը, թէ հողի մշակումը պիտի առաջ տարուի ընկերական-համայնական սկզբունքով։ Ինքը կառավարութիւնը որոշ չափով հովանաւորում է այդ հայեացքը և հողը կապալով յանձնելիս առաւելութիւն է տալիս ընկերութիւններին, քան թէ առանձին մասնաւոր մարդկանց։ Անշուշտ այստեղ խօսք լինել կարող է միայն կամաւոր կերպով կազմուած ընկերութիւնների և համայնքների մասին,

առանց որ և է ստիպողութեան կամ փոխադարձ երաշխաւորութեան, և վերջապէս առանց այն բացասական կողմերի, որ գոյութիւն ունին Ռուսաստանի համայնքների մէջ և հանդերձ այն դրական կողմերի, որ կան նրանցում։

Այդ համայնքներն ինքնավար են, որոնց համար և համայնքի անդամները ընտրում են իրենց միջից յատուկ մարդիկ, որոնք և կազմում են խորհուրդ։ Այդ խորհուրդը վարում է համայնքի գործերը։ Ամեն մի համայնք ունի հասարակական պահեստներ բոլոր այն մթերքների, ինչ որ արտադրում է այդ համայնքում։ Պահեստներից իւրաքանչիւր ոք ստանում է այն, ինչ կարիք որ նա ունի. ուրեմն և ընտանիքաւորները աւելի են ստանում, քան թէ ամուրի կամ այրի մարդիկ։ Աշխատանքը այդպիսի համայնքում նոյնպէս ընդհանուր է. խորհուրդը ինքը որոշում է, թէ իւրաքանչիւր մարդ աշխատանքի ինչ բաժին ունի հողը մշակելու, ջրելու, բնակարաններ կառուցելու գործում։ Ակներև է, որ այդպիսի համայնքում ոչ միայն հողը, այլ և արտադրութեան բոլոր միջոցները և երկրագործական մեքենաները, աշխատաւոր անասունները ևս ընդհանուր են։ Սակայն պէտք է ասել, որ այդպիսի համայնքների թիւը Նոր-Զելանդիայում և Աւստրալիայում դեռ ևս մեծ չէ։

Այսպէս ուրեմն, վերոյիշեալ բոլոր ասածներից կարելի է հետևցնել, թէ ինչ ուղղեամբ է գնում հողային օրէնսդրութեան յետագայ զարգացումը Նոր-Զելանդիայում, և թէ վերջի վերջոյ ինչ նոր կազմի պիտի հասցնէ այդ օրէնսդրութիւնը։

Ամբողջ հողը պէտք է դառնայ ամբողջ պետութեան, ամբողջ ժողովրդի, սեփականութիւն։ Ամեն ոք կարող է օգտուել այնչափ հողից միայն, որչափ նա ինքը անձամբ մշակել կարող է, առանց վարձու աշխատաւորների օգնութեան։ Ժողովրդի ընտրեալները բաժանում են հողը գիւղերի ու համայնքների մէջ, նրանց բնակիչների թուի համա-

1р

ԶԿԿ

ձայն։ Գիւղերում և համայնքներում աշխատում են միասին, ուր գործիքները և աշխատաւոր անասուններն էլ համայնապատկան են։ Ցորենը և ուրիշ մթերքները պահւում են համայնական շտեմարաններում և այնտեղից բաժանւում են առանձին-առանձին ընտանիքների մէջ, նայած թէ ով որքան է աշխատել և քանի հոգուց է բաղկացած նրա ընտանիքը։ Այդ համայնքները ոչ մի նմանութիւն չունին մեր այժմեան գիւղական համայնքների հետ։ Այնտեղ ոչ ոք կապուած չէ հողի հետ, ամեն մէկը կարող է համայնքից դուրս գընալ կամ դառնալ համայնքի անդամ։ Չկայ այստեղ ոչ մի փոխադարձ երաշխաւորութիւն, չկայ ոչ մի տեսակ հարկ, բացի հողի համար պետութեան տրուող կապալավաճարից, որը փոքր է և վճարւում է ընդհանուր գումարներից, որոնք գոյանում են հողերից ստացուած ընդհանուր եկամուտից։ Այսպիսի պայմաններում ամեն մի անհատ, որը ցանկանում է հող ունենալ, միշտ կստանայ այդ հողը, իսկ ընկերութիւնները միշտ էլ նրան հնարաւորութիւն կտան հարկաւոր տնտեսութիւնը սկսելու և վարելու, մանաւանդ այն պատճառով, որ ոչ միայն հողը, այլ և երկրագործական մեքենաները և աշխատաւոր անասունները մասնաւոր մարդկանց փոխարէն պատկանում են ընդհանրութեանը, որի կողմից էլ նրանք գտնում են գործածութիւն. ուրիշ խօսքով ասած հասարակական հողը մշակւում է հասարակական գործիքներով ու անասուններով։ Այսպիսի հասարակական կազմի մէջ չկայ ոչ կալուածատէր, ոչ վաշխառու ոչ ձրիակեր և ոչ էլ աղքատներ. չի լինում աւերածութիւն կամ սով։

Ահա թէ ինչ նոր ուղղութեամբ է սկսում զարգանալ հողային օրէնսդրութիւնը Նոր-Զելանդիայի բախտաւոր կղզիների վրայ։

ՀՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZCUA-Арм.ССР
Ա. ԱՄ. Ա. Մ՝ՅՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0209100